ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԳՀԱՊՁԲ-10/20-1»

ք. Երևան 20 -ը հունիսի 2018թ

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից «ՆԱՐՆԻԿ» ՍՊԸ-ն, ի դեմս կազմակերպության տնօրեն Փ. Կարապետյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքների ծագման երկրներն են՝ Սրաքար հաստոցի կարծր մետաղի Φ250*75*25 ապրանքատեսակի դեպքում՝ Ռուսաստանը, Մետաղ կտրող սկավառակ հաստոցի Φ 400*32*3 ապրանքատեսակի դեպքում՝ Չինաստանը, Հիմնային մարտկոց 7Ա ժամ 12վ ապրանքատեսակի դեպքում՝ Բուլղարիան, Խոտհնձիչ մեքենայի դանակ ապրանքատեսակի դեպքում՝ Չինաստանը, Ոռոգման ցայտիչներ կանգնակով ապրանքատեսակի դեպքում՝ Չինաստանը, Ոռոգման ցայտիչների գլխիկներ ապրանքատեսակի դեպքում՝ Չինաստանը, Ոռոգման ցանցի ջրթող փական ապրանքատեսակի դեպքում՝ Չինաստանը, Ջրախառնիչների միջուկներ ապրանքատեսակի դեպքում՝ Չինաստանը, Խառատային հաստոցի կտրիչներ (տարբեր) ապրանքատեսակի դեպքում՝ Ռուսաստանը, Էլեկտրաջերմային տաքացուցիչ չոր միջավայրի ապրանքատեսակի դեպքում՝ Գերմանիան, Բազկաթոռների նիկելապատ խաչուկներ ապրանքատեսակի դեպքում՝ Չինաստանը, Բազկաթոռների ամբարձիկներ ապրանքատեսակի դեպքում՝ Չինաստանը, Ոռոգման ցացնցի ջրաչափ-D200 ապրանքատեսակի դեպքում՝ Ռուսաստանը, Գազ սառնագեն R22 ապրանքատեսակի դեպքում՝ Չինաստանը, Սառնարանային ճնշակի յուղ SUNISO-3GS ապրանքատեսակի դեպքում՝ Ռուսաստանը, Վերելակի լուսադիոդային լամպ 3վտ 220վ ապրանքատեսակի դեպքում՝ Չինաստանը, Անթափանց պոլիվինիլային ինքնակպչուն թաղանթ ապրանքատեսակի դեպքում՝ Չինաստանը, Ալյումինե դռների ընթացքի կարգավորիչ /հատակային/ ապրանքատեսակի դեպքում՝ Չինաստանը, Պոլիէթիլենային խողովակի փական ձգումով D63 ապրանքատեսակի դեպքում՝ Չինաստանը, Պոլիէթիլենային խողովակի անցում,անկյունակ ձգումով D63 ապրանքատեսակի դեպքում՝ Չինաստանը, Փոշեկուլ ապրանքատեսակի դեպքում՝ Իտալիան, Ջրի հոսքի ռելե ապրանքատեսակի դեպքում՝ Ռուսաստանը, Ջեռուցման համակարգի օդահան փական ապրանքատեսակի դեպքում՝ Չինաստանը, Պարալոն ծակոտկեն 2000*1000*50մմ ապրանքատեսակի դեպքում՝ Չինաստանը, Ջրի ախտահանիչ <<Ալգեցիտ>> ապրանքատեսակի դեպքում՝ Գերմանիան, Ջրի ախտահանիչ << Մուլտի ակցիոն>> ապրանքատեսակի դեպքում՝ Գերմանիան, Ջրի ախտահանիչ <<Ֆլակուլյանտ>> ապրանքատեսակի դեպքում՝ Գերմանիան, Անշփում լվացման միջոց ապրանքատեսակի դեպքում՝ Չինաստանը, Տեխնիկական աղ ապրանքատեսակի դեպքում՝ Հայաստանը, Ջրի PH կարգավորիչ ապրանքատեսակի դեպքում՝ Գերմանիան, Ջրի PH կարգավորման ստուգիչ ապրանքատեսակի դեպքում՝ Գերմանիան:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից** ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:
2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:
2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.
2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝
ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.
բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից** ավելի,
2.1.8 Ընտել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:
2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:
2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:
2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:
2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:
2.3 Վաճառողն իրավունք ունի՝
2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:
2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:
2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:
2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:
2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:
2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:
2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:
2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:
2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:
2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:
2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:
2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:
2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***4 030 320*** (չորս միլիոն երեսուն հազար երեք հարյուր քսան) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:
Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:
3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այնությունները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):
5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:
5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:
6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝

մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:
6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:
6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:
Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:
8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:
8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:
8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:
8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:
Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ծեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:
Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի

վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում *ՀՀ ՊՆ ԿԾ և ԶԲ վարչությունը:*

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Նարնիկ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Ավան, Նրեկացի 54/9
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Կոնվերս բանկ» ՓԲԸ, Ավան մ/ճ
Հ/Հ 900011117034	Հ/Հ 1930051066800100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ00888893
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-10/20-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ *

Հ/հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Չափի միավորը	Բնութագրող հիմնական հատկանիշները
1	Սրաքար հաստոցի կարծր մետաղի Φ250*75*25	հատ	Նախատեսված լեգերացված և կարծր մետաղներ սրելու և հղկելու համար: Արտաքին տրամագիծը 250մմ, անցքի տրամագիծը 75մմ, հաստությունը ոչ ավել 25մմ:
3	Մետաղ կտրող սկավառակ հաստոցի Φ 400*32*3	հատ	Նախատեսված մետաղահատ հաստոցի համար: Արտաքին տրամագիծը 400մմ, անցքի տրամագիծը 32մմ, հաստությունը ոչ պակաս 3մմ:
4	Հիմնային մարտկոց 7Ա ժամ 12վ	հատ	Մարտկոցը՝ հիմնային, չափսը՝ 150x95x65մմ, կշիռը՝ 1740 գր, հզորությունը 7Ա/ժամ, լարումը 12վ, արտադրությունը ոչ ուշ 2017թ-ից:
8	Խոտհնձիչ մեքենայի դանակ	հատ	Դանակը՝ պատրաստված կոփված մետաղից համապատասխան անցքերով: Երկարությունը 500-550մմ, լայնությունը 56մմ, հաստությունը 3մմ:
10	Ոռոգման ցայտիչներ կանգնակով	հատ	Աշխատանքը 1.5/կգ/սմ/քառակուսի ճնշման տակ ավտոմատ կարգավորվող, 0-360° պտտման տիրույթով, Աջ և ձախ կողմերի ջրի ցփնում մինչև 15մ տրամագծով և ընդհատումներով, միացումը խողովակաշարին D15մմ արտաքին տրամագծով, կանգնակի բարձրությունը ցայտիչով ոչ պակաս 300մմ-ից:
11	Ոռոգման ցայտիչների գլխիկներ	հատ	Գլխիկը պլաստմասե; D 3/8 ներքին պարույրով, տրամագիծը 20մմ, բարձրությունը 21մմ, 0-360° կարգավորվող
15	Ոռոգման ցանցի ջրթող փական	հատ	Փական ամբողջությամբ պոլիէթիլենային, միացվում է ջրագծերին 3/4" արտաքին պարույրով, կափարիչով, երկարությունը ոչ ավել 200մմ-ից, առանց փաթեթավորման:
17	Ջրախառնիչների միջուկներ	հատ	Միջուկը պլաստմասե, պտտումը աջ և ձախ կողմ, 45°, գլանաձև, ոչ պակաս Φ35x23x10 մմչափերի, բռնակը ոչ պակաս 9x9x20մմ-ից:
18	Խառատային հաստոցի կտրիչներ (տարբեր)	հատ	Կտրող մասը կարծր համաձուլվածքից (победит), պղնձաեռով զոդված կտրիչի ծայրին: Կտրիչի չափերը՝120x15x20մմ:
19	Էլեկտրաջերմային տաքացուցիչ չոր միջավայրի	հատ	Լարումը 220վ, հզորությունը 2640 վտ, չոր միջավայրում աշխատող, տաքացվող հաղորդալարը՝ նիքրոմ:
20	Բազկաթոռների նիկելապատ խաչուկներ	հատ	Պատվանդանը հնգաթև, ոտքերը մետաղական, նիկելապատ, յուրաքանչյուր թևի երկ. 390 մմ, լայն. 50մմ,թևերը առանց հոլովակների (ролик)
21	Բազկաթոռների ամբարձիկներ	հատ	Ամբարձիկը (домкрат) կարգավորում է նստատեղի բարձրացումը կամ իջեցումը գլանաձև Φ50x200մմ, գլանի մեջ տեղադրված ձողի աշխատանքը հիդրավլիկ: Ձողը տեղադրված գլանի մեջ Φ28x150մմ չափերով
22	Ոռոգման ցանցի ջրաչափ - D200	հատ	Մակնիշը WTC-200 կամ համարժեք, իրեն D200 2 հատ կցաշուրթերով և 16 հատ M22 հեղույս մանեկով, նախատեսված չափելու տեխնիկական ջրի ծավալը, 16 բար ճնշման համար, առավելագույն թողունակությունը 500 մ³/ժամ, կշիռը ոչ պակաս 60կգ
23	Գազ սառնագեն R22	կգ	CHCeF2 կամ քլորից ֆլորմեթան, նախատեսված սառը օդ մատակարարող ագրեգատների համար: Տարան մետաղական, գլանաձև: Բարձրությունը 350մմ, տրամագիծը 180մմ, փականով, մեկտարայի տարողությունը 13.6կգ:
24	Սառնարանային ճնշակի յուղ SUNISO-3GS	լիտր	Նախատեսված սառնարանային կոմպրեսորի յուղի ամենամյա փոխարինման և լրացման համար, աշխատում է մինչև 100F ջերմային միջավայրում, տարան պլաստմասե, տարողությունը 4 լիտր: Տարայի վրա նշված լինի արտադրության ժամկետները:
25	Վերելակի լուսադիոդային լամպ 3վտ 220վ	հատ	Հզորությունը 3 վտ, 220վ, երկոտանի, բաղկացած 3 հատ յուրաքանչյուր 1վտ հզորությամբ լուսադիոդային լամպերից, իրանը 50մմ, փաթեթավորումը ստվարաթղթե, գործարանային:
29	Անթափանց պոլիվինիլային ինքնակպչուն թաղանթ	փաթեթ	Նախատեսված ապակիների վրա կպցնելու համար, փաթեթի լայնությունը 1220մմ, երկարությունը 50 մետր, գույնը մոխրագույն:
31	Ալյումինե դռների ընթացքի կարգավորիչ / հատակային/	հատ	GEZEմակնիշի կամ համարժեք, նախատեսված դռան ընթացքը կարգավորելու համար, ապահովում է 0-90° բացում դեպի դուրս և 0-90° փակում դեպի ներս , երկմխոցանի, աշխատանքը կարգավորող կոճակով, 260x70x50մմ չափսի, իրանը մետաղական, տեղադրվում է դռան տակ հատակի մեջ, կշիռը ոչ պակաս 3կգ-ից:
34	Պոլիէթիլենային խողովակի փական ձգումով D63	հատ	Նախատեսված D63 ՊԷ խողովակի վրա ձգման եղանակով տեղադրելու համար, աշխատանքային ճնշումը ոչ պակաս 10բարից, փականը ամբողջությամբ ՊԷ-ից:

35	Պոլիէթիլենային խողովակի անցում,անկյունակ ձգումով D63	հատ	Նախատեսված D63 ՊԷ խողովակի վրա ձգման եղանակով տեղադրելու համար, աշխատանքային ճնշումը ոչ պակաս 10բարից, փականը ամբողջությամբ ՊԷ-ից:
36	Փոշեկուլ	հատ	Մակնիշը MID-20 կամ համարժեք, հզորությունը 900վտ, 230վ, 50հց, օդ քաշող խողովակը ներքինից զսպանակաձև չժանգոտվող մետաղից, արտաքինը պոլիվինիլային ծածկույթով, ամբողջությամբ գոֆրեատիպ, երկարությունը առանց ձգման ոչ պակաս 1100մմ, տրամագիծը 40մմ, խողովակի վրա ամրացվող այլումինե խողովակի երկարությունը ոչ պակաս 210մմ-ից, D40, փոշի հավաքող տարան չժանգոտվող մետաղից Φ230x230մմ չափի, փաթեթավորումը գործարանային ստվարաթղթե արկղի մեջ, առնվազն 1 տարի երաշխիքային ժամկետ
37	Ջրի հոսքի ռելե	հատ	Նախատեսված տառնարանային կամ տաք օդ մատակարարող սարքավորումների ջրի հոսքի վրա տեղադրելու համար, միացումը խողովակին 1/2" արտաքին լատունե պարույրով, աշխատանքային ճնշումը 10 բար, 1-90°C, Φ 60x70x55 չափսի, փաթեթավորումը գործարանային ստվարաթղթե տուփի մեջ:
38	Ջեռուցման համակարգի օդահան փական	հատ	Նախատեսված ջեռուցման համակարգի հետադարձ օղակի վերջնամասում տեղադրելու համար և ավտոմատ ձևով օդային խցանումներ թույլ չտալու: Միացումը խողովակաշարին D 15 արտաքին պարույրով, չժանգոտվող մետաղից, Φ45*90մմ չափսի: Փաթեթավորումը գործարանային ստվարաթղթե տուփի մեջ:
40	Պարալոն ծակոտկեն 2000*1000*50մմ	հատ	Խողովակի ներքին տրամագիծը 20մմ, խողովակի ռետինը քառաշերտ գործվածքով, նախատեսված 1-60°C ջրի ջերմաստիճանի, 25 բարը ճանշման համար: Խողովակը արտաքինից պատված կարբոնատային շերտով:
43	Ջրի ախտահանիչ <<Ալգեցիտ>>	լիտր	Դեզինֆեկցիոն քիմիական նյութ, տարան պլաստմասե, պտտվող խցան փականով, մատակարարումը իրականացվում է գործարանային տարաներով, նյութը՝ հեղուկ, արագ ազդող հակաբացիլային ախտահանիչ, կանխարգելում է ջրային բորբոսների, սնկերի և այլ բակտերիաների առաջացմանը: Օգտագործումը 0,25լիտրը 100խմ ջրին
44	Ջրի ախտահանիչ << Մուլտի ակցիոն>>	կգ	Դեզինֆեկցիոն քիմիական նյութ, տարան պլաստմասե դույլերով, ամուր փակված կափարիչով, մատակարարումը իրականացվում է գործարանային տարաներով, մեկ տարան պարունակում է 0,2կգ-ոց Φ70x20մմ 125 հատ չոր վիճակում դանդաղ լուծվող քլորի կոճակներ: Օգտագործումը 3 կոճակը՝ 200խմ ջրի համար:
45	Ջրի ախտահանիչ <<Ֆլակոպլանտ>>	լիտր	դեզինֆեկցիոն քիմիական նյութ, մատակարարումը իրականացվում է գործարանային պլաստմասե տարայով, նյութը հեղուկ,նախատեսված է ջրում եղած միկրոկեղտոտվածության մասնիկների նստեցումը ջրի հատակին: Օգտագործումը 0,25լիտր ֆլակոպլանտը 100խմ ջրին
46	Անջփում լվացման միջոց	լիտր	Ավտոմեքենաների լվացման խտանյութ, որը ունի ուժեղ փրփրակալելու հատկություն: Նախատեսված է մարդատար և բեռնատար ավտոմեքենաների պրոֆեսիոնալ լվացման համար: Հեշտությամբ լվանում է չփչացնելով ռետինե պլաստմասսե, նիկելապատ քրոմապատ դետալները: 1լ պլաստմասսե տարաներով:
47	Տեխնիկական աղ	կգ	Տարան պոլիէթիլենային 25կգ պարկերով, սառույց հալեցնելու համար. աղացած. հատիկի մեծությունը 0.2-2.0 մմ³
48	Ջրի PH կարգավորիչ	կգ	Նախատեսված է լողավազանի PH -ը նվազեցնելու համար: Նպաստում է լողավազանի մետաղական սարքերի և դետալների կորոզիայի չենթարկվելուն, պաշտպանում է լողորդների աչքերի և լորձաթաղանթի գրգռվածությունից և ջրի պղտորվելիությունից: Փաթեթավորումը գործարանային, պլաստմասսե 3 կամ 5 կգ տարաներով:
49	Ջրի PH կարգավորման ստուգիչ	հատ	Լողավազանի ջրի PH պարունակության էլեկտրոնային ստուգիչ սարք, չափման տիրույթը 6.5-8.4, աշխատանքը մարտկոցով 2 հատ AA տիպի, փաթեթավորված ստվարաթղթե տուփով:

***Ծանոթություն.** Ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված: Ապրանքները պետք է մատակարարվեն ՀՀ ՊՆ ԿԾ ԵՎ ԶԲ վարչության կենտրոնական պահեստ՝ Արշակունյաց 135:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ԴԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«Նարնիկ» ՍՊԸ
տնօրեն

Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հ.Հ. Ազգային Հարկային ծառայություն
AN 071219

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Ապրանքի անվանում	Չ/Մ	Քանակ	Միավորի գին (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումար (ՀՀ դրամ)	Մատակարարման ենթակա քանակները՝ ըստ 2018թ. համապատասխան եռամսյակների	
						2-րդ եռամսյակ հունիս	3-րդ եռամսյակ օգոստոս 31.08.2018թ
1	Սրաքար հաստոցի կարծր մետաղի Φ250*75*25	հատ	1	28 100	28 100		1
2	Մետաղ կտրող սկավառակ հաստոցի Φ 400*32*3	հատ	4	7 300	29 200		4
3	Հիմնային մարտկոց 7Ա ժամ 12վ	հատ	8	13 500	108 000	8	
4	Խոտհնձիչ մեքենայի դանակ	հատ	3	20 500	61 500	3	
5	Ոռոգման ցայտիչներ կանգնակով	հատ	8	16 000	128 000	8	
6	Ոռոգման ցայտիչների գլխիկներ	հատ	60	1 800	108 000		60
7	Ոռոգման ցանցի ջրթող փական	հատ	11	7 300	80 300	11	
8	Ջրախառնիչների միջուկներ	հատ	30	1 100	33 000	30	
9	Խառատային հաստոցի կտրիչներ (տարբեր)	հատ	10	3 700	37 000	10	
10	Էլեկտրաջերմային տաքացուցիչ չոր միջավայրի	հատ	8	30 000	240 000		8
11	Բազկաթոռների նիկելապատ խաչուկներ	հատ	6	12 500	75 000		6
12	Բազկաթոռների ամբարձիկներ	հատ	11	11 363,64	125 000		11
13	Ոռոգման ցանցի ջրաչափ - D200	հատ	1	215 000	215 000	1	
14	Գազ սառնագեն R22	կգ	108.8	4 900	533 120	108.8	
15	Սառնարանային ճնշակի յուղ SUNISO-3GS	լիտր	16	4 400	70 400	16	
16	Վերելակի լուսադիոդային լամպ 3վտ 220վ	հատ	20	2 900	58 000	20	
17	Անթափանց պոլիմինիլային ինքնակպչուն թաղանթ	փաթեթ	1	150 000	150 000		1
18	Ալումինե դռների ընթացքի կարգավորիչ / հատակային/	հատ	2	79 000	158 000		2
19	Պոլիէթիլենային խողովակի փական ձգումով D63	հատ	3	16 000	48 000	3	
20	Պոլիէթիլենային խողովակի անցում.անկյունակ ձգումով D63	հատ	6	5 500	33 000	6	
21	Փոշեկուլ	հատ	1	27 500	27 500	1	
22	Ջրի հոսքի ռելե	հատ	3	12 000	36 000		3
23	Ջեռուցման համակարգի օդահան փական	հատ	6	6 000	36 000		6
24	Պարալոնձակոտկեն 2000*1000*50մմ	հատ	5	7 600	38 000	5	
25	Ջրի ախտահանիչ <<Ալգեցիտ>>	լիտր	60	4 100	246 000		60
26	Ջրի ախտահանիչ << Մուլտի ակցիոն>>	կգ	70	4 800	336 000		70
27	Ջրի ախտահանիչ <<Ֆլակուլյանտ>>	լիտր	60	2 750	165 000		60
28	Անջիրում լվացման միջոց	լիտր	60	2 650	159 000		60
29	Տեխնիկական աղ	կգ	1000	58	58 000		1000
30	Ջրի PH կարգավորիչ	կգ	178	2 400	427 200		178
31	Ջրի PH կարգավորման ստուգիչ	հատ	1	183 000	183 000		1

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Նարնիկ» ՍՊԸ
տնօրեն

Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

07.11.18

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-10/20-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	Ապրանքի անվանում	CPV կոդ	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ., այդ թվում՝						
			հունիս	հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 25.12.2018թ
1	Սրաքար հաստոցի կարծր մետաղի Φ250*75*25	44423680/15/10/1	18 827	18 827	28 100	28 100	28 100	28 100	28 100
2	Մետաղ կտրող սկավառակ հաստոցի Φ 400*32*3	44423680/15/10/1	19 564	19 564	29 200	29 200	29 200	29 200	29 200
3	Հիմնային մարտկոց 7Ա ժամ 12վ	44423680/15/10/1	72 360	72 360	108 000	108 000	108 000	108 000	108 000
4	Խոտհնձիչ մեքենայի դանակ	44423680/15/10/1	41 205	41 205	61 500	61 500	61 500	61 500	61 500
5	Ոռոգման ցայտիչներ կանգնակով	44423680/15/10/1	85 760	85 760	128 000	128 000	128 000	128 000	128 000
6	Ոռոգման ցայտիչների գլխիկներ	44423680/15/10/1	72 360	72 360	108 000	108 000	108 000	108 000	108 000
7	Ոռոգման ցանցի ջրթող փական	44423680/15/10/1	53 801	53 801	80 300	80 300	80 300	80 300	80 300
8	Ջրախառնիչների միջուկներ	44423680/15/10/1	22 110	22 110	33 000	33 000	33 000	33 000	33 000
9	Խառատային հաստոցի կտրիչներ (տարբեր)	44423680/15/10/1	24 790	24 790	37 000	37 000	37 000	37 000	37 000
10	Էլեկտրաջերմային տաքացուցիչ չոր միջավայրի	44423680/15/10/1	160 800	160 800	240 000	240 000	240 000	240 000	240 000
11	Բազկաթոռների նիկելապատ խաչուկներ	44423680/15/10/1	50 250	50 250	75 000	75 000	75 000	75 000	75 000
12	Բազկաթոռների ամբարձիկներ	44423680/15/10/1	83 750	83 750	125 000	125 000	125 000	125 000	125 000
13	Ոռոգման ցացնցի ջրաչափ - D200	44423680/15/10/1	144 050	144 050	215 000	215 000	215 000	215 000	215 000
14	Գազ սառնագեն R22	44423680/15/10/1	357 190	357 190	533 120	533 120	533 120	533 120	533 120
15	Սառնարանային ճնշակի յուղ SUNISO-3GS	44423680/15/10/1	47 168	47 168	70 400	70 400	70 400	70 400	70 400
16	Վերելակի լուսադիոդային լամպ 3վտ 220վ	44423680/15/10/1	38 860	38 860	58 000	58 000	58 000	58 000	58 000
17	Անթափանց պոլիվինիլային ինքնակպչուն թաղանթ	44423680/15/10/1	100 500	100 500	150 000	150 000	150 000	150 000	150 000
18	Ալյումինե դռների ընթացքի կարգավորիչ / հատակային/	44423680/15/10/1	105 860	105 860	158 000	158 000	158 000	158 000	158 000
19	Պոլիէթիլենային խողովակի փական	44423680/15/10/1	32 160	32 160	48 000	48 000	48 000	48 000	48 000

	ձգումով D63								
20	Պոլիէթիլենային խողովակի անցում,անկյունակ ձգումով D63	44423680/15/10/1	22 110	22 110	33 000	33 000	33 000	33 000	33 000
21	Փոշեկուլ	44423680/15/10/1	18 425	18 425	27 500	27 500	27 500	27 500	27 500
22	Ջրի հոսքի ռելե	44423680/15/10/1	24 120	24 120	36 000	36 000	36 000	36 000	36 000
23	Ջեռուցման համակարգի օդահան փական	44423680/15/10/1	24 120	24 120	36 000	36 000	36 000	36 000	36 000
24	Պարալոն ծակոտկեն 2000*1000*50մմ	44423680/15/10/1	25 460	25 460	38 000	38 000	38 000	38 000	38 000
25	Ջրի ախտահանիչ <<Ալգեցիտ>>	24961200/1/10/1	---	---	246 000	246 000	246 000	246 000	246 000
26	Ջրի ախտահանիչ << Մուլտի ակցիոն>>	24961200/1/10/1	---	---	336 000	336 000	336 000	336 000	336 000
27	Ջրի ախտահանիչ <<Ֆլակուլյանտ>>	24961200/1/10/1	---	---	165 000	165 000	165 000	165 000	165 000
28	Անշփում լվացման միջոց	24961200/1/10/1	---	---	159 000	159 000	159 000	159 000	159 000
29	Տեխնիկական աղ	24961200/1/10/1	---	---	58 000	58 000	58 000	58 000	58 000
30	Ջրի PH կարգավորիչ	24961200/1/10/1	---	---	427 200	427 200	427 200	427 200	427 200
31	Ջրի PH կարգավորման ստուգիչ	24961200/1/10/1	---	---	183 000	183 000	183 000	183 000	183 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«Նարնիկ» ՍՊԸ
տնօրեն

Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

«ՆԱՐՆԻԿ»
"НАРНИК"
"NARNIK"
00886893

Հ. Հ. Հարկերի գրասենյակ
N 07 11219

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-10/20-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-10/20-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն